ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

(ԽԵՒ) ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

Բ. ՍԻՐԵՐԳՆԵՐ

= 4 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ·— I

ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Ա.

Արեկ, արեկ, իմ խուպ սուրաթ, փառք ու պատիւ քո ստեղծողին,
Եդեմական դրախտէն կու գաս, աւրհնեալ անուն քո նաղշողին:

Բ.

Արեկ, արեւ գարնանային, ւ արեկ աշնան պայծառ լուսին,
Նիստ որ հայիմ երեսդ ի վեր, տեսրդ հերիք է ինձ բաժին:

Գ.

Տեսրդ բժիշկ է հիւանդին, առողջութիւն է ջերմնոտին,
Աչերդ ծով է ծարվածին, բերանրդ քաղցր է քաղցածին:

Դ.

Ծոցդ է դրախտ անմահութեան, ի յետ դարձնէ զելած հոգին,
Ոչ մեռանի, ոչ ծերանայ, ոչ երեսվին դառնայ դեղին:

Ե.

Վաղվնէն ում հանդիպի՝ ի ծայր ելնու աւրն ի բարին,
Ով որ զսուրաթն համբուրէ՝ խնդմով անցնէ զբոլոր տարին:

Զ.

Զով դու սիրով ի ներս ծենէս, ծաղկի բան զծառն ըզխնկենին,
Ով կուռ միջացդ գիրկ ածէ, կանաչ մընայ բան զնշդարին:

Է.

Խեւ Յովանէս Թուրկուրանցի փառաւորէ զՀայր եւ զՈրդի,
Աղվոր սուրաթն ի հող դառնայ, ւ ի հուրն անշէջ իւր սիրելին:

Բնագիր Ա. էջ 103։ — Հմմտ. — Գ էջ 307։ Ն = Տաղասէր (= Հ. Ն. Ակինեան) Արեգ, 1924, էջ 473։ Բ = Ց. Բիւրատեան, Հայրենիք Ամսագիր, 1935, Յունիս, էջ 31։

Ա. 1. — խուփ, Բ։

Գ. 1. — է, Դ, Զուճի Ա։

Դ. 1. — անմահութիւն, ԱԳ։

Ե. 1. — ի ծայր, Բ. ի ծար, Ա. ի ծեր, Գ։

Զ. Զունի Բ։ Ցով դու, Գ։

Է. 1. — Խէվ Ց. Թուլկուրանցի, Գ. — 2. — հիւրն, Ա։

digitised by A.R.A.R.@

= 5 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ·— 2

Ա.

Տեսայ պատկերք մի գեղեցիկ, զէտ զարեզակն որ լոյս կու տայ,
Տեսայ այեր զէտ ըզծովեր, ուներ բան զամպ ու զտարիայ:

Բ.

Ուրակ ճակատ ու ճոխ բերան, ծամն ու վարսերն էր հոգեհան,
Ծոցն է լրցած սպիտակ վարդով, մէջքն ու թիկունք բան զուռ ճօճան:

Գ.

Ելից ի յիս հանց հուր ու բոց, որ կու վառիմ զաւրն ի լման,
Մոռցայ զուսումն զոր ունի, մնացեր եմ լոկ աշխարհական:

Դ.

Ասցի, սիրէ զիս ծով այեր, ասաց՝ պահեմ զաչս ի վերան,
Նիստ որ հայիմ երեսդ ի վեր, յերակ կացիր ինձ յերեւան:

Ե.

Ասուած ողորմեաց ինձ եղբայրք, որ զայն երեսս ինձ պատասխան,
Թէ չէ մնայի խէվ կապելու, ւ ի շուրջ կու գի բան զգայլ գազան:

Զ.

Թէ շատ թէ քիչ ի յետ ծգեմ, միթէ անցնի հուրս ի խափան,
Նայ սէրն ի սիրտս ի ներս կ'երթայ, ւ ես կու մընամ մեղաց դարան:

Է.

Բերեմ անցնեմ զահն ի մրտիս, ու զդժոխոց հուրն անվախճան,
Մի թ'ազատիմ այս կըրակէս, որ յանկասկած ինձ վառեցան:

Ը.

Խէվ Յովանէս Թուրկուրանցի, ցրվէ զխորհուրդդ դիւական,
Հան ի սրտէդ սէր աշխարհիս, աւրհնէ զանեղ բանն էական:

= 6 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ·— 3

Ա.

Արեւնման շողշողկտան, բանի սիրով զաչերդ ածես,
Թէ սէր յիշես ու թէ չյիշես, ես կու սիրեմ սրտովս զքեզ:

Բնագիր Ա. էջ 106։ — Հմմտ. Գ, էջ 308։ Բ = Ձեռ. Ս. Ց. Թ. 1417, Տաղաբան նոտրագիր, թկ. ՌՂԳ? = 1644, էջ 427։ Ն = Արեգ, 1924, էջ 516։ Ռ = Հայր. Ամս. 1935, Ցնս. էջ 32։

Ա. 2.— ղերդ, Գ։

Գ. 2.— զուսումն զոր ունէի, Բ։

Դ. 1.— Նայ ասաց, ԱԳՆԲ։

Ե. 1.— ողորմէր, ԱԲՆԲ։

Է. 1.— ի սըրտիս, Բ. անվաղջան, Ա. անվաղճան, Գ։

Ը. 1.— Թուլկուրանցի, Գ։ — 2.— հանէ սրտէդ Գ։

Բնագիր, Ա. էջ 108։ Հմմտ. Ն = Ա.

digitised by A.R.A.R.@

Ռ.

Դուն ըզվէմերըն խորտակես, դուն ըզլերունքն ի հալ հանես,
Զով դու սիրով նատար ենես, անանց կրակով զանծնիկն այրես:

Գ.

Դու աւրինակ ես աղէկնուն, այլ մայրն չէ բերեր զէտ քեզ,
Սպիտակ ճակատ ու սեւ աչեր, լութիւն ու բարամ ով լոյս երես:

Դ.

Լար շրթունովդ վարդ թափես, ճաւճան վզովդ բերդ քակես,
Ամէն անծամբդ ես գեղեցիկ, բաւէլ թէ քեզ նման դու ես:

Ե.

Բայց ինչ ենեմ ճարակ չկայ, մահու մեղաց ներքեւ եմ ես,
Հայիմ ի քեզ, հայիմ ի նայ, որ ի հողոյ ստեղծեր է զքեզ:

Զ.

Եէվ Յովանէս Թուրկուրանցի, զաւրն ի բուն ընդ այլ կասես,
Զմարդն ի կըրակըն կու ծգես, դառնաս լընուս ջուր ւ անցնես:

= 7 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ·— 4

Ա.

Հազար Ուսուցի է քեզ ծառայ, է արեգակն ու խուպ սուրաթ,
Ամէն աշխարհըս քեզ ցիտէ, զէրայ չունիս իսկի խալատ:

Բ.

Զրկայ ի քեզ մազ մի խալատ, անծամբդ սուրբ եւ անարատ,
Ես կու զրեմ զիս քեզ մատաղ, ու քեզ ծառայ ու քեզ զարաթ:

Գ.

Շուշան ըռահան ու մանուշակ, ու նաւնաւիթար ի ծոցն վարդ,
Անմահ խնծոր ու սերկեւիլ, նուռն ու նարինջ ու կարմիր վարդ:

Դ.

Ծոցդ է դրախտ անմահութեան, անմահական պտղով դրախտ,
Դու աւրինակ ես աղէկնուն, ըզքեզ սիրէ Աստուած եւ մարդ:

բեզ, 1924, էջ 518։ Բ = Հայր. Ամս. 1935, Յունիս, էջ 33։ Ս = Գ. Վ. Սրուանձտեանց, Մանանայ, 1876, էջ 268 (խառնակ է)։ Գ. էջ 309։

Ա. 1.— չողշողզ կը տաս, Ս. կու տաս, Գ։— 2.— սէր — զիս, Ս։

Բ. 1.— ըզվիմերըն, Ա. զվէմերըն, Բ. ըզվեմերըն, ՆՍ։— 2.— նազար, Բ. նազար, Ս։

Գ. 2.— ու սև — թուխ թուխ, Ս։

Դ. 2.— քաւել, Ն. քաւէլ, Բ։ . . . քեզ նըմանակ միայն դու ես, Ս։

Ե. 2.— . . . է զքեզ, Դ. է քեզ, Ա։

Զ. 1.— այլ, ՆՍ. ընդալ, Բ։ . . . Թուլկուրանցի, Գ։

Բնագիր Ա. էջ 110։ Հմմտ. Գ. էջ 310։ Ն = Արեգ, 1924, էջ 518։ Տ. էջ 29։ Բ = Հայր. Ամս. 1935, Յնս. էջ 33։

Բ = Դ, Բ։

Գ = Բ, Բ։

Դ = Գ, Բ։— Դ. 1.— անմահութիւն, Ա։ Դրախտ — լըցած, Ն։— . . . լըման պտղովն անմահութեան, Բ։

digitised by A.R.A.R.@

Ե.

Հարեղանուն ես որոգայթ, քահանայից ակնակուռ զարդ,
Զմիակեցին խելքն տանիս, թէ կեցեր է զօրն անապատ:

Զ.

Ասէ Յովանէս Թուրկուրանցի, սրտի մըտօք զականջըդ բաց,
Աստէնս արայ քեզ ճար շուտով, անտէն առնուս պըսակ փառաց:

= 8 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ.— 5

Ա.

Հանցկուն այլ ով տեսել զմրուխ, տպազիոն ակն ու ճուճար,
Ինձ յանկասկած ի դէմս ելաւ, շունչս քաղեց ու զխելքս էառ:

Բ.

Չի թող ի յիս համբերութիւն, ի տուն ի դուրս չունիմ դադար,
Թէ շատ թէ քիչ ի յետ ծգեմ, տեսն ի մըտացս չի գնայր:

Գ.

Քանի տեսնում կու սարսափիմ, սիրտս ի փորիս կառնու գալար,
Ինձ մեղադիր է՞ր կու լինիք, ով որ տեսնու չմնայ արդար:

Դ.

Չէտ ըզթիթեռն ի մոմն ի մօտ, այրումն եկեր եմ չկայ ճար,
Այ իմ խումրի, ես ինչ ենեմ, եփ այս խոցոյս դեղն է դիժար:

Ե.

Ասէ Յովանէս Թուրկուրանցի, զօրն ի քուն ընդ ալ մի տար,
Հան ի սրտէտ զսէր աշխարհիս, Տէրն չտանի զկամբդ ի կատար:

= 9 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ.— 6

Ա.

Լոյս երեսացդ է քո փափաք, բաղաք Խութան ու Չինմաչին,
Թէ տեսնու զվարսդ Հնդըստան, ընդ որ երթաս հետդ կոչին:

Ե. 1.— ակնատուզարդ, ԳՆ: — Բիւրատեան կ'առաջարկէ ուղղագրել. «Ու քահանայից ական ու զակարդ», որ յաջող չէ: — ակնակուռ, Տ: ակնակ ու զարդ, Ա: — 2.— զմիակեցուց, Գ: — . . . որ կացեր է զօրն անարատ, Տ:

Բնագիր, Ա. էջ 112: Հմմտ. Գ. էջ 311: Բ = Հայր. Ամս. 1935, Յլս. էջ 89, բազմավրիպակ:

Ա. 1.— Հընցկուն, Բ: — 2.— ինձ անկարծակ, Բ: էառ — իառ, Ա:

Դ. 1.— ըզթիթեղն, Ա:

Բնագիր, Ա. էջ 114: Հմմտ. Գ. էջ 312: Տ. էջ 32: Բ = Հայր. Ամս. 1935, Յլս. էջ 86:

Ա. 1.— քո փափաք — խիստ փափուկ, Տ: — 2.— զվարսն, Ա. զվարսդ ի, Տ:

digitised by A.R.A.R.@

Բ.

Հարիւր տարու հարեղանին, որ ճերմակն է դարձեր դեղին,
Կարէ զքուստին պատարագին, ու զքեզ ուզէ առջեւ խաչին:

Գ.

Դու դեղ ես ուրախութեան, որ զքեզ տանին ի պաղչանին,
Ջծամդ ու զվարսերդ ի վայր թողուս, զծոցդ բանաս ի մէջ պաղչին:

Դ.

Ով զքեզ սիրէ ոնց մեռանի, կամ երեսլին դառնայ դեղին,
Պարծանք ու վաշ քո ծընողին, փառք ու պատիւ քո արարչին:

Ե.

Ոնց կարէ գովել զքեզ, խէվ Յովանէս Թուրկուրանցին,
Քեզի վայլէ ծառայ խալթի, պուլղար, չարքազ, հոռոմ, լատին:

= 10 =

ԲԱՆՔ ՍԻՐՈՅ.— 7

Ա.

Թէ մահըն չէր ու կամ մեռնիլ, ես ունի շատ բան հոգալու,
Չիշխեմ դներ զիս պիղծ գործոյ, վախեմ չդադրի աչս ի լալու:

Բ.

Ես զքեզ տեսայ նըման լուսոյ, զէտ զարեգակն որ նոր կելնու,
Սիրտս այրեցաւ բարկ կրակով, էս մնացի խեւ կապելու:

Գ.

Ես իմ սրտիս դանակ ածեմ, զաչքս ճաղի տամ հանելու,
Սատէնս չէնէ զիս ամօթով, անտէն բաժին կեր գեհենու:

Դ.

Բայց չէ շահեր մարդ ի սիրու, ոչ փառք առեր ի յԱստուծու,
Սատէնս կենէ զմարդն ամօթով, անտէն բաժին կեր գեհենու:

Ե.

Խեւ Յովանէս Թուրկուրանցի, մի դներ զքեզ պեղծ բաներու,
Ամէն ոչինչ դատարկ բանի անտէն համար ունիս տալու:

(3)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Բ. 1.— տարւոյ, Տ. — 2.— զկօռտիկ, Տ. զքստուկ, Բ. — կըտրեն . . . ուզեն, Գ.
Գ. 1.— . . . ու զքեզ գտնին . . . Բ.
Ե. 2.— . . . հոռմ, լաչին, Ա.
Բնագիր, Ա. էջ 116. Հմմտ. Տ. էջ 49. Գ. էջ 313.
Ա. 1.— ի լալոյ, Գ.
Գ. 2.— զիս — խիստ, Տ. չանէ . . . անդէն, Գ.
Դ. 2.— անդէն, Գ.
Ե. 2.— անդէն, Գ.

digitised by A.R.A.R.@